

# ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ ՀՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Գրեց՝ Յ. ձ. ՍԻՐՈՒՆԻ

## ՆԱԽԱԲԱՆԻ ՏԵՂ

**Ք**ՐՆՆԱԿԱՆ աշխատութիւն մը մէջտեղ հանելու յաւակնութենէն չի բխիր այս վերնագիրը: Որքան ալ յաւակնտ ըլլայ այդ վերտառութիւնը, ան կը բացատրէ հեղինակին մտահոգութիւնը միայն՝ մեր անցեալէն մութ էջ մը պարզուած տեսնելու: Ապա թէ ոչ այս ուսումնասիրութիւնը համեստ փորձ մըն է միայն հայ մշակոյթի պատմութեան մէկ գիծը լոյսին հանելու:

Համեստ է փորձը, որովհետեւ համեստ է նախ հեղինակին հմտական պաշարը եւ անոր կը պակասի վանականի համբերութիւնը փոշիներուն մէջէն մարզրիտ որսալու: Համեստ է նաեւ անոր համար, որ գետին մըն է այս ուսումնասիրուածը, որուն համար ժլատ է պատմութիւնը ինքը: Փաստերն ու հետքերը կը պակասին, դրեթէ չկան. պէտք է դանտնք ստեղծել մտքի ուժով, սրտի ուժով, որքան կը ներէ անշուշտ գիտական խղճմտութիւնը:

Առաջին վերապահումն է ուրեմն աս՝ յետագայ աշխատութեան հեղինակին:

Բայց նուազ արդար չէ երկրորդ վերապահութիւնը: Այն, որ թատրոնի տեսակէտով աղքատ եղած է մեր անցեալը: Եթէ յաճախ կը պակասին փաստերը, որպէսզի պրպտողը կարենար վճռական բան մը ըսել, չուրանանք միւս կողմէ սակայն, որ խուզարկուած նիւթը հարուստ չէ ինքը արդէն: Ասով ալ քիչ մը աւելի արդար կը դառնայ հեղինակին չքմեղանքը, երբ ընթերցողները շատ պաշար չգտնեն իր որոնումներուն մէջ:

Ու չքմեղանք մը նաեւ հայ ժողովուրդին համար: Եթէ ան չէ կրցեր թատերական ճոխ անցեալ մը ունենալ՝ իր պատմութեան աստանի վրայ չզման կ'արգարացնէ իր մեղքը: Եթէ չէ կրցեր ինքնատիպ ըլլալ իր հին թատրոնին մէջ՝ մեղքը իր դրացիներուն վրայ, որոնք յաճախ ճգմեր են զինքը գէնքով, բարքերով ու մշակութիւնով: Այնպէս որ, երբ հին հայ թատրոն

կ'ըսենք՝ ինքնուրոյն արուեստի մը իմաստովը չէ յաճախ: Թատրոնի մը գոյութեան փաստերը պրպտելու ճիգ մըն է մասամբ այս աշխատութիւնը:

Իցի՛ւ թէ աւելի բախտաւոր ըլլան անոնք, որ նոր խուզարկութեանց պիտի ձեռնարկեն վաղը:

## ՄՇՈՒՇԻ ՄԷՁ Է ՄԵՐ ԱՆՅԵԱԼԸ

Բայց ամենէն համեստ փորձն անգամ իր արդարացումը ունի: Մեր անցեալը պրպտող ամէն աշխատանք, որքան ալ չնչին ըլլայ իր բերած լոյսը, արժանի է դոնէ դոյզն յարգանքի մը:

Թանձր մշուշ մըն է պատեր մեր ամբողջ անցեալը: Շատ քիչ բան դիտենք մեր հին օրերուն մասին: Գրեթէ ոչինչ է մեր դիտյածը մանաւանդ մեր հեթանոսական շրջանին վրայ: Միայն մեր բարքերուն ու մշակոյթին պատմութիւնը չէ, մեր քաղաքական հին կեանքն ալ խաւարի մէջ թաղած է իր դէմքը: Չենք գիտեր մեր գիրքերուն ծագումը, հայերէն լեզուին ծագումը, ոչ իսկ ծագումը մեր ցեղին: Առասպելները, որոնք մեր հոգին կը շոյեն ու մեր սնապարծութիւնը՝ չենք ուզեր արեւուն հանել, դնել գիտնականի նշդրակին տակ: Կարծես կը վախնանք, որ կը փարատի մշուշը:

Հայ ժողովուրդը ինքզինքը չի ճանչնար: Ու դարձեալ օտարներն են, որ կը փորձեն դմեզ ճանչցնել մեզի: Գերման գիտնական մըն էր Հիւպլամանը, որ մեր լեզուին առաջին ակը փնտոնեց, ու փորձեց տեղ մը գտնել մեր լեզուին ու մեր ցեղին համար՝ աշխարհի միւս բարբառներուն ու ժողովուրդներուն շարքին մէջ: Վերացի մըն էր, որ մեր աւերակները խօսեցուց: Նիկօլայ Մառին կը պարտինք արդարեւ Անիի աւերակներուն լեզուն: Աւստրիացի Սարիժիկովսկին էր, որ սորվեցուց մեզի մեր ճարտարակերտական հանճարին յաղթանակները դարերուն ու ցեղերուն վրայ: Ու Վալերիյ Բրիւ-